

ցէ ոչ մի գաւառական քաղաքում այնքան չեն համակրում «Մշակ» լրագրին, որքան Բագրուի մէջ։ Անհնարին է նկարագրել թէ որքան հետաքրքրութեամբ ձեռք լրագրի համարները այստեղ ձեռքից ձեռք են անցնում, փոստը ստացած ժամանակ։ Առհասարակ Բագրու միշտ արձագանք է տալիս ամեն ազգագրութեան գործերին։ Ոչ ոք չէ մոռացել, ինչպէս Հայաստանի սովի ժամանակ, Բագրու հետեցաւ «Մշակին» հրաւերին, քսան օրվայ մէջ ժողովեց 7000 ռուբլի։ Գաւառացի ինտելիգենցիան առհասարակ համակրում է «Մշակին», բայց մանաւանդ մեր քաղաքի երիտասարդները։ Բագրու կարելի է բացառութիւն համարել, առհասարակ, գաւառական քաղաքներում իր եռանդի կողմից։ Այստեղ կայ Մարդասիրական ընկերութիւն, գրադարան, երկսեռ դպրոց, հայ-աւետարանականներն էլ ունեն իրանց դպրոցը, որ մի և նոյն ժամանակ և նրանց ժողովարանն է։ Քաղաքիս փողոցները լայնացնելու և զեղեցկացնելու համար քաղաքային դուման մեծ գումարներ է ծախսում։ Նորերս սկսել են ծովի դէպի քաղաքն ընկած ափերի վրա մի քարայէն պատ քաշել և նրա առջևի ճանապարհը ուղղել։ Պէտք է աւելցնեմ որ տեղին հայ հասարակութեան ամենաեռանդոտ մասը կազմում են ոչ թէ բնիկ սակաւթիւ հայերը, այլ օտարականները, մանաւանդ չուշեցիները և շամախեցիները։ Ջարմանալի է որ շամախեցիները, որոնք այստեղ աշխատասէր և եռանդոտ են, իրանց հայրենի քաղաքում, Շամախում, ամենամեծած մարդիկ էին։

Մեզ գրում են Իրիւթի, որ այդտեղի հասարակութիւնը շատ դժգոհ է տեղական բժշկից։ Շատերը հիւանդներից կատարելապէս զուրկ են մնում բժշկի հոգաբարձութենից։ Բացի սորանից խղիւղում զեղատուն (ապտէկա) չը կայ և զեղեր բերելու համար, պէտք է գնալ Երևան։ Թղթակիցը հարցնում է. միթէ Սուրբաբուի վիճակի հասարակութիւնը չէ կարող իր մէջ մի գումար հաւաքել և խղիւղում հիմնել մի զեղատուն, ի հարկէ կառավարութենից այդ հիմնարկութեան համար թոյլտուութիւն խնդրելուց յետոյ։

— — — — — որ սպասեմքերի ըսկզբներում աղքատը հայոց ուսումնարանի աշակերտները մի թատրոնական ներկայացում տուցին, որից շատ գոհ մնաց հասարակութիւնը և խնդրեց կրկնել։

Ղարսից մեզ գրում են։ «Աչքի առաջ ունեցի՞մ այն, որ Ղարսի նման մի նոր դարձացող և ուսումնադուրի տեղի համար խիստ մեծ կարեւորութիւն ունի ազգային կրթութեան և լուսաւորութեան տարածումը, այդ պատճառով հրաւիրում ենք ազգային բարերարների և գործիչների ուշադրութիւնը Ղարսի երկսեռ չքաւոր դպրոցների վրա, այդ հաստատութիւններին կարողութեան չափ ներկայացնել օգնելու համար, որպէս զի նրանց գործիւնը ապահովվի։»

Հետաքրքիր է իմանալ ինչ է անում այն յանձնաժողովը, որ ընտրվել է Շաքուրովի և Քամոյեանց եկեղեցու գործը քննելու համար։ Կարծում ենք որ մի ամիս անցել է, իսկ յանձնաժողովը, որքան յիշում ենք, խոստացել էր ընտրվելուց մի ամիսը յետոյ ներկայացնել եկեղեցու ծխականներին իր աշխատութիւնների եզրակացութիւնը։

Ստանում ենք գրեթէ ամեն օր բազմաթիւ տեղեկութիւններ Ներսիսեան դպրոցի վարչութեան, տեսչի, ուսուցիչների, վերակացուների և հոգաբարձուների գործունեութեան մասին։ Բայց ինչպէս մեր շատ ուրիշ ազգային հիմնարկութիւնների մասին, այնպէս էլ Ներսիսեան դպրոցի մասին կատարելապէս ապարդիւն ենք համարում մի որ և է բան գրելու։

Սկստեմքերի վերջին օրերումս ցրտերը յանկարծակի սկսվեցան թիֆլիսում։

Մեզ պատմում են որ մինչև Մարտի 15-ը միայն չորս թիֆլիս վերադարձացել, իբրև նրա տեղապահ արդէն հասել է թիֆլիս Սեդրակեան Արիստակէս վարդապետը։

Մեզ հաւատացնում են, որ թիֆլիսի մէջ իր կացութեան կարծ ժամանակամիջոցում Մարտի վարդապետը կարողացել է գնել 10,000 ռուբլի գումարի մի կարողութիւն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Վիեննայի „Journal d'Orient“ լրագրում կարդում ենք հետեւեալ նամակը Կ. Պոլսից գրված։

Ես շատ ցաւում եմ որ ստիպված եմ ձեզ խոստովանվել թէ ամենամանկութեամբ տալաւորութիւններին եմ ենթարկվել վերադառնալով այստեղ։ Մի կողմից անշափ մեծ և հակաքաղաքական խոստութիւն է տիրուս այստեղ թիւրքաց կառավարութեան կողմից հայերի վերաբերութեամբ, լրագրները խափանվում են, թատրոնները փակվում են կառավարութեան հրամանով, միայն այն պատճառով որ գործողները այդ հիմնարկութիւնների մէջ հայեր են։ Արգելված է ներկայացումներ տալ հայոց լեզուով, արգելված են հայոց երգեցողութիւնները։ Հայաստանում կատարվում են ամեն տեսակ հալածանքներ և ծնշումներ նախագծված պլանով, աշխատում են սիստեմատիկաբար ջնջել հայոց ազգութիւնը, — և այդ ամենը կատարվում է որպէս զի այդ մակիավէլական միջոցներով չէզոքացնեն եւրոպական պետութիւնների դիտաւորութիւններն ու գործողութիւնը։ Հայերի այժմեան վիճակը աւելի թշուառ է, քան թէ եւրոպայի միջամտելուց առաջ։ Պետութիւնները դժբաղդապէս բաւականաչափ համբարաշխ չեն այդ խնդրի մէջ և պարզապէս տեսնում ենք արդէն որ պետութիւններից իւրաքանչիւրը հպատակվելով իր առանձնական շահին, պատրաստ է նորից զոհել հայոց ազգութեան վիճակը իր ետականութեան զգացմունքին։ Գուց պետութիւններից իւրաքանչիւրի գործելու և հայեացքի եղանակը ծանաչում էք արեւելեան խնդրի վերաբերութեամբ։ Շատերը, կարծես, տրամադիր են նորից զոհ բերել հայաստանը թիւրքաւոր բարեկամութիւնը ստանալու համար։

Թիւրքաց հայերը, շարունակում է թըղթակիցը, տատանում են յուսահատութեան և ատելութեան մէջ։ Նրանք հառաչում են քրիստոնէի հարստահարութիւններին և թիւրք տեղական պաշտօնականների անյազուրկան տակ։ Հայերը տրամադիր են հաւատալ որ կենսորոնական վարչութիւնը իրան նպատակ է դրել գլխովին ոչնչացնել ազգը։ Սակայն այդ ազնիւ, աշխատասէր, խաղաղ և արդիւնաբերող ազգը արժանի է աւելի լաւ վիճակի։

Իր նամակի վերջում թղթակիցը իր համակրութիւնն է յայտնում դէպի Վիեննայի Ֆրանսիական թերթը և յայտնում է թէ ուղարկում է խմբագրութեանը նշանաւոր գովումներ, որոնց միջոցով կը մերկացվին շատ ճշմարտութիւններ։

„НОВОЕ ВРЕМЯ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

„Новое Время“ լրագրին Կ. Պոլսից գրում են սկստեմքերի 3-ից։

Հայոց խնդիրը նորից առաջացնում են Լօրդ Դէօֆերինի եռանդոտ առաջարկութիւնների պատճառով Բ. Կրանը, Բիւրլինի դաշնագրի 61-դ յօդուածի իրագործման մասին պետութիւնները նորից ստիպված են փորձել իրանց համբերութիւնը թիւրքերի յամառութեան դէմ։ Ինչպէս յայտնի է յիշեալ յօդուածը ի նկատի ունի հայերի և թէ ոչ կատարեալ ազատութիւնը ասիական դարեւոր լուծից, որ ծանրացել է և ծանրանում է նրանց վրա, գոնեա նրանց վիճակի բարւոքումը։ Ճշմարիտ,

հայերի վիճակը վատ է և մանաւանդ խղճալի է, որովհետեւ եւրոպան առանձին ուշադրութիւն չէ դարձրել նրանց վրա և ցաւակցութիւն չէ յայտնել դէպի նրանց վիճակը։ Բիւրլինի կոնգրեսի ժամանակն էլ քիչ էր մնում մոռանալին հայերին և միայն վերջին ընդհանրութեանը նրանց յիշեցին Բ. Կրանից ծնված ազգութիւնների հոգաբարձու քաղաքագէտները։ Այդ իրողութիւնը մեկնվում է այն հանգամանքով, որ թիւրքահպատակ բոլոր քրիստոնէայ ազգերից հայերը հեռացած են Ասիայի խորքերը, հեռապէս նրանց դուրսիւնը այնքան չէ կարող ենթարկվել եւրոպայի հսկողութեանը, որքան միւս ազգութիւնների վիճակը։ Յարմար հաղորդակցութիւններից զուրկ, հասարակական կեանքի ամենաապրական պահանջների վերաբերութեամբ անապահով թիւրքաց Հայաստանը ընդարձակ ասպարէզ է ներկայացրել թիւրքաց կամայականութեան գործադրութեան համար, իսկ թիւրք աստիճանաւորներն էլ իրանց բարբարոսութեան մէջ քրիւղերին օգնականներն են դարձրել։ Հայերը, ինչպէս ասում են, ստիպված են երկու կրակի մէջ ապրել։ Մի կողմից թիւրքը առնում է նրանցից ամեն տեսակ հարկեր, միւս կողմից քրիւղը կողոպտում է այն բոլորը, ինչ որ մնում է օրինական և սիստեմատիկաբար կատարված բռնութիւններից յետոյ։ Երեք տարիներ անցել են այն ժամանակից, ինչ հայերի համար յուսոյ ճառագայթ երևաց, որ պետութիւնները վերջապէս նրանց ձեռք կը մեկնեն, Բիւրլինի դաշնագրի 61-դ յօդուածի հիման վրա խոստանալով նրանց վիճակը բարւոքող վերանորոգութիւններ։ Այդ ժամանակամիջոցի ընթացքում Բ. Կրանը միջոց ունէր իր հոգով հայտնաբերելու համար։ Բայց իսկապէս ի՞նչ պատահեց։

Այս հարցի վերաբերութեամբ բոլորող պետութիւնները լուծւում էին թիւրքաց կառավարութեան պարտականութիւնների մասին, իսկ Կ. Պոլսի մէջ այդ պարտականութիւնները կատարելու համար աւելի լաւ միջոց չը գտան, քան թէ հայերի վիճակի վատթարացնելը։ Իր սովորութեան համեմատ Բ. Կրանը հայոց հարցը հեշտացնելու տեղ կարողացաւ աւելի էլ նրան խըճծնել և նախկին զօրաւորութիւններին նորերը աւելացնել։ Այդպիսի զօրաւորութիւններին մէկը Սիւրի հայոց կաթողիկոսի յանդիմանի նշանակելն էր, որ այս անգամ կատարվեցաւ առանց էջմիածնի կաթողիկոսի համաձայնութեան, որ հայ եկեղեցական ինքարիւնային ամենաբարձր տեղն է։

Այդպիսի գործը կարող է շատ փոքրացնել պետութիւնների առանց այդ էլ անհաստատ յոյսերը Հայաստանի մէջ վերանորոգութիւնների իրագործման մասին։ Դժուար է հասկանալ, թէ ի՞նչի Բ. Կրանը այդ կողմից աւելացնում է զօրաւորութիւնների թիւը։ Եթէ հայերի եկեղեցական հարցերը թիւրքայի ներքին քաղաքականութեան առարկայ են կազմում, ուրեմն պէտք չէ մոռանալ, որ բոլոր հայերի կաթողիկոսը, հայոց պապը՝ ապրում է էջմիածնի մէջ, այսինքն առևտաց հողի վրա։ Այսպիսով Բ. Կրան վերջիշեալ կարգադրութիւնը երևում է, որ նա ոչնչացնում է կամ անուշադիր է թողնում առևտահպատակ հայերի եկեղեցական միութիւնը միւս հայերի հետ։

Բ. Կրանը, այդպիսի գործ կատարելով, ակնբեր է, որ լաւ չէ հասկանում նրա մեծ նշակութիւնը։ Էջմիածինը հայալուսաւորչականների համար միշտ կենսորոնատեղի է և

դէր, ունենալով նրանց աչքում պապական Հռոմի նշանակութիւնը, նա միշտ հայ աւերակների արօթատեղի է հայ ուխտաւորների գումարման տեղ է եղել։ Կաթողիկոսը միշտ ապրել է իր վանքի մէջ և արեւելեան այլ պետերի նման անսահման իշխանութիւն է ունեցել իր հպատակների վրա։ Նրան տուած այցելութիւնները միշտ փառաւոր են եղել և նրանց ժամանակ հպատակութիւն և հնազանդութիւն է յայտնվել։ Մինչև այժմ էջմիածինը հայերի եկեղեցական և քաղաքական կենտրոնատեղի է եղել և էջմիածնի վրա իշխանութիւն ունեցող կաթողիկոսը ունեցել է իսկական իշխանութիւն։ Բոլոր հայերի վրա և ամբողջ Հայաստանի քաղաքական համակրութիւնն է վայելել։ Ինչպէս երևում է Բ. Կրանը չը գիտէ կամ չէ կամենում այդ բանն իմանալ։ Նա քրիւղերին գրգռում է հայերի դէմ, դիմում է կեղծ շրջաբերականների վերանորոգութիւնների խոստումներով, որոնք թղթի վրա էլ տեղ չեն ունեցել, և այդպիսով իր իշխանութիւնը Հայաստանի մէջ ապահով է համարում։ Բայց չենք օգործական և յուսական խնդիրները ցոյց տուին, թէ եւրոպան մինչև որ աստիճան կարող է հաւատալ սուլթանի խոստումներին, իսկ հայոց կաթողիկոսի նշանակելը պէտք է համոզել պետութիւններին, որ անկարելի է յուսալ Բ. Կրանի կամքի և պատրաստականութեան վրա Բիւրլինի դաշնագրից իրագործելու մասին հայերի վերաբերաւ։ Միւս կողմից հայկական խնդրի վերաբերութեամբ զեպանների մէջ կատարվող բանակցութիւնները, որոնց սկզբնապատճառ դարձել են անգլիական և ռուսաց զեպանները, շատ չեն կարող անհանգստացնել Բ. Կրանը։ Հայաստանի մէջ մտցնելի վերանորոգութիւնների հարցը չենք օգործական և յուսական սահմանները ուղղելու հարցերի չափ նշանաւոր չէ։ Որքան վերջինները կարող էին խանգարել եւրոպական խաղաղութիւնը, հետեապէս հետաքրքիր էին եւրոպական պետութիւնների համար, նոյնքան հայոց խնդրի լուծման մէջ շատ քիչ են հետաքրքրված նոյն կառավարութիւնները։ Այսպիսով եւրոպայի ծնշումը Բ. Կրան վրա հայկական հարցի վերաբերութեամբ նոյն բնաւորութիւնը չի ունենայ, ինչ որ ունէր չերսօգործական և յուսական խնդիրների վերաբերութեամբ։ Այս անգամ նախագծված է ազգիկ թիւրքաց կառավարութեան վրա ոչ թէ սպառնալիքներով և ուղղակի ծնշում գործելով, այլ համագունքի ոյժով։ Գոնեա պետութիւնների ներկայացուցիչները նորերումս հաւաքվեցան ռուսաց զեպանի մօտ և կազմեցին այն գլխաւոր վերանորոգութիւնների նախագիծը, որոնք հարկաւոր են Փոքր-Ասիային և հայերով բնակեցրած նահանգներին։ Կեպանները մտադիր են այդ նախագիծը ներկայացնել Բ. Կրանը և առաջարկել նրա իրագործումը այն դէպքում, եթէ ինքը թիւրքաց կառավարութիւնը ոչինչ չի անի հայկական խնդրի լուծելու համար։ Պետութիւնների ներկայացուցիչներից իւրաքանչիւրը այդ առիթով տեսնվել է Ասիւմ փաշայի հետ, որին առաջարկված է ուղարկել Հայաստան արքունական մի գործակաւ տար և նրան ընդարձակ իրաւունքներ տալ անընդունակ վարչական անձանց փոփոխելու և նրանց զեղձումները ուղղելու համար։ Արտաքին գործերի մինիստրը շտապեց հաւատացնել միջնորդներին, որ ամեն բան կը կատարվի։ Բայց Լօրդ Դէօֆերին չը բաւականացաւ այդպիսի խոստումով։ Նա տեսնում էր ունեցաւ սուլթանի հետ, որին առաջարկեց նոյնը, ինչ որ Ասիւմ փաշային և,

օգուտ քաղելով այդ դեպքից, ծանօթաց-
րեց սուլթանին շայտստանի մէջ մնացելի
վերանորոգութիւնների նախագծի հետ:
Դիպլոմատական շրջաններում հաւատա-
ցած են, որ այդ առաջին փորձը Բ. Գրան
վրա «համազման ուժով» ներգործելու հա-
մար, աշտոնութիւն կունենայ և որ սուլթանը
շուտով կազարկի շայտստան յիշեալ գոր-
ծակաւորին: Այնքան է, որ սուլթանի հա-
մար դա միակ էլք է, քանի որ դեսպանները
յամառութեամբ պաշտպանում են հայկա-
կան խնդիրը: Բայց արդեօք այդ գործն էլ
օգտակար չի լինի Թիւրքիայի համար, ար-
դեօք Բ. Գրանը օգուտ չի քաղի այդ դեպ-
քից ժամանակ փաստակերտ համար:

ԱՆԳԼԻԱ

Գարֆիլդի յիշատակը յարգելու համար
Լոնդոնի մէջ հոգեհանգիստ կատարվեցաւ,
որին ներկայ էին մօտ 2000 մարդիկ: Ժո-
ղով սկսվեցաւ մի հոգեհանգիստի կարգա-
ցած աղօթքով, որի վերջնական յետոյ
ամերիկական դեսպան Լոուէլ մի երկար
ճառով նկարագրեց Գարֆիլդի կենսագ-
րութիւնը և հայրենիքին մատուցած նրա
անձնական ծառայութիւնները: Հանգու-
ցեալի անձնական բարձր յատուկութիւնները
թեւեղեց յետոյ դեսպանը շնորհակալութիւն
յայտնեց անգլիական ժողովրդին և թա-
գուհուն, որոնք ցաւակցութիւն յայտնեցին
ամերիկական ժողովրդի վշտին, որ բա-
ժանում են բոլոր դասակարգերի ամերիկա-
ցիները: Միացեալ Նահանգների նոր նախա-
գահի մասին դեսպանը ասաց, որ անքա-
ղաքաւոր է համարում՝ քննադատել նրա
քնաշարժութիւնը: Մի քանի ուրիշ ճառերից
յետոյ ժողովը վճիռ կայացրեց ցաւակցու-
թիւն յայտնել հանգուցեալ Գարֆիլդի
ընտանիքին:

Սեպտեմբերի 26-ին Պարնէլ վերադարձաւ
Կոլորն: Սը նայելով, որ նա շատ ուշացաւ,
այնու ամենայնիւ երկաթուղու կայարանի
մօտ հաւաքվել էին մօտ 20,000 մարդիկ,
որոնք իրանց հետ ունէին երաժշտութիւն,
փողաւոր և ջութակ և որոնք ողբերգութեամբ
ընդունեցին կալուածական միութեան ա-
ռաջնորդին: Ամբոխը նրան ողբեցեց մինչև
կալուածական ժողովի գումարման տեղը,
ուր նրան մի ուղերձ ներկայացրին: Այդ
ուղերձին Պարնէլ պատասխանեց մի ճառով,
որի մէջ ի միջի այլոց նկատեց, որ իրան-
գիայի համար անհրաժեշտ է օրէնսդրական
անկախութիւնը:

ՆԱՍՏԱՅ ԹԻՒՐԿԻԱՅ

Կ. Պոլսի, 14 սեպտեմբեր
Այստեղի հայ սօփոսանքը, որ ասվում է ին-
տելլիգենցիա, դարձեալ առնում է նա-
մակիս նիւթ, մանաւանդ որ Թիֆլիսի մի քանի
պարզամտներ դարձանքով ասում են, թէ՛ ժա-
նանակ է հիմայ անտասական կամ ուրիշ հար-
ցերով դրաղվել, երբ ամենից զիտաւորը հայոց
հարցն է, որով և եթ հարկաւոր է պարապվի-
ն հարկէ այդ մի այնպիսի նորութիւն չէ, որը
արժան լինէր նաև լրագրի մէջ տպել, բայց
ասեցեք խնդրեմ միթէ՛ ուրիշ ներքին հարցերով
զբաղվողները հենց մի րոպէ մտաւնում են և
հայոց հարցի մասին. իսկ գիշեր ցերեկ հայոց
հարցի վրա միայն խօսելը արդեօք չաղակրատ
պատահի գործ չէր լինի, երբ մեր այս խնդրը
տարիներով առկա մնալով միայն այս քանի
օրերս երևան ելաւ, այն էլ դարձեալ մեր բաղ-
դից ընդմիջվելով առ այժմ եղիպտական անց-
քերով: Այսպիսի հանգամանքների առաջ կանգ-
նած լինելով հարկաւոր չէր արդեօք մի օր ա-
ռաջ սկսել մտածել մեր ներքին գործերի վրա
ևս, ինչպէս Միացեալ կամ միւս ընկերութեանց
գործն է: Բայց դիցուք թէ հիմայ, այս րոպէիս

հարկաւոր է յիշել միայն և եթ, գիշեր և
ցերեկ հայոց խնդրի վրա խօսելը բայց թող ներ-
վի մեզ հարցնել այդպէս խօսողներին, թէ ինչ
բան են անում նոքա արդեօք իրանց դարդա-
կախօտութիւններով: Եթէ հայոց խնդրի սիրահար
պտուղներին են այսպիսիները, թող նոքա ի-
րանք առաջինը մտածէին գոնէ այնպիսի գործ-
նական նպատակների վրա, ինչպէս Եւրօպայում
հայոց օրգան ունենալու կարեւորութիւնն է, ինչ-
պէս օտար լրագիրներին մէջ հայոց համար պրո-
պագանդա անելն է, ինչպէս թղթակիցները դէս
ու դէն ուղարկելու հարցն է, ինչպէս արդէն
հիմնական օրգանին վերջնական մէջ օգնութիւն
հասցնելու անհրաժեշտութիւնն է, ինչպէս այդ
լրագիրն յօդուածներ և նիւթ ուղարկելու կա-
րիքն է, և այլն և այլն:

Մինչդեռ ոչ մէկը այս ամենից չանելով, այլ
բոլոր ժամանակ պարապելով միայն դանդաղ
անձնական և մասնաւոր խնդրանքներով, դանդա-
ղան թատրոնական խնդրանքներով, վեր են կա-
ցել այժմ բարոյք են կարգում՝ թէ՛ հայոց հար-
ցով է հարկաւոր պարապվիլ: այն, հայոց հար-
ցով պէտք է պարապված, բայց ոչ լոկ դարդակ
խօսելով, վանորոյց եթէ միայն լրագիրը լցնե-
լու համար չեն հրատարակում նորան, այլ գործ
յառաջանցիկը համար, թող ուրեմն մի օր ա-
ռաջ գործնական բաների ետեւից ընկնեն, այլ
ոչ թէ այստեղի հայ սօփոսանքի պէս դարդա-
կախօտութիւններով ժամանակ անցնեն:

A propos անձ մի լաւ ապացոյց թէ որչափ
անպիտան և վնասակար արդիւնք են արտադ-
րում ճարտար կերպով լրագիրներին և դահլիճնե-
րի մէջ հայրենասիրական և քաղաքականութիւններ
անդրերը՝ «Journal d'Orient»-ի երեսն գալու
օրից ի վեր Կ. Պոլսի մէջ միայն երեք բաժա-
նորդ գտնվեցաւ, մինչդեռ քանի երեք հազար
անգամ երեք մարդիկ կարելի է տեսնել այստեղ,
որոնցից իւրաքանչիւրը «հայոց հարց», «անհա-
յոց հարց» է աղաղակում. յայտնի պոռոտախօ-
սող մի խմբագրութեան նման: Ան աղաղակ
են օգնում հայոց հարցի յառաջադիմութեան և
Սօսիւնի ընկերակից Կիօգէնէսները և Եղիա մար-
գարէները:

Պ. Միսա Զերազի հետ արդէն խօսեցինք, որ
այստեղեան մի անգամ ընդ միշտ կանոն դրվի,
իւրաքանչիւր չօրս ամիսը մէկ լրագրական մի-
ջոցով դրամական և ուրիշ ներքին կարգադրու-
թեանց բոլոր հայրենները ազգին ներկայացնել
տեսնենք թէ ընդհանուր ժողովի անդամներն էլ
կը համաձայնվեն դրա հետ: Սը նայելով որ կան
մի քանի յետադէմ անձինք այդ ժողովի մէջ,
բայց յուսանք, որ Միսա ընկերութիւնը ըն-
դունակ կը լինի մի ճշմարիտ և իստակ գործ կա-
տարելու, քանի որ ճանաչում ենք նոր տնօրէն
ժողովի բարիացակամութիւնը և լաւ արամադ-
րութիւնը:

Բայց թող Թիֆլիսի սօփոսանքը մի անգամ
ընդ միշտ հաշտվեն, որ նոքա չեն ընդունակ ոչ
միայն հայոց խնդրի վերաբերմամբ մի երկական
միտք յայտնել, մի նոր ինքիմատիվ ունենալ,
այլ արքայութիւն գնալու գործի մէջ անգամ
նոքա պիտի միշտ լինեն նոյն նախանձից խն-
քածողները, նոյն բնավոր շնորհաւորները, կոյր-
պատանները և սահմանափակ «ազգաբնակները»,
ինչպէս եղել են զբաւ մինչև հիմայ ևս և կը
մնան իրանց յետնորդներին մէջ մինչև աշխարհի
վերջը, մինչև նոր ջրհեղեղը: Մարդի գանգը,
ուղեղը, բարոյականութիւնը փոխելը հնչու բան
չէ, որոք համար որչափ ժամանակ և ինչիս են
հարկաւոր, որչափ բան է հարկաւոր հասկացնե-
լու համար: Կ. Պոլսի «զարգիւթիցիներին» ևս թէ
լրագրութեան մի այսպիսի ժամանակ, ազգի
վերածնութեան հենց սկզբումը կաշառ առնելու
է պատիւ վաճառելու ապարկը չը պիտի լինի,
բայց ինչ, միթէ սոքա բան կը հասկանան, մի-
թէ սոքա կուղղվեն. երկէ չէր միայն արդեօք
որ Թէ՛ չի մէկն ի ֆրեբար ասվող լրագրի
խմբագիրը հրապարակապէս յայտնեց թէ Մա-
սի սի աշխատակից Բիւզանդ Գէլէեան իր խմ-
բագրութիւնը մտնելով մէկ ու երկ փող է գո-
ղացել, որի պատճառաւ Մասիսն էլ երկու
օր է որ արդարացման յօդուածներով է զբաղեց-
նում հասարակութիւնը: Ինչո՞ք ժողովուրդը յու-
ռահատ կերպով հարկը կողմից ճիշ է բարձրաց-
նում ասելով. «ամեն, միթէ մեր ազգային ցա-
ւերը Մասիսի գողութիւնն կամ Թէ՛ չի մէ-
կնի բերած փաստաբանական ապացոյցներ են»,
բայց ձեռ վրա կարող է աղբը ժողովրդի
թշուառ և անտէր վիճակը. այսօր միմեանց

«զող» «սրիկայ» կասեն, վաղը միմեանց հետ մի
քանի մէջիկով հաշտվելով, կը սկսեն միմեանց
գողել և «մեծ» «անմահ», «սքանչելի» ու «հա-
մարդ» ասել: Ահա այնչափ է ընկած Կ. Պոլսի
մէջ հայ հրապարակախօսութիւնը, այս կէտն է
հատկ այստեղի ինտելիգենցիայի բարոյական և
մտաւորական դրութիւնը. դեհ եկէք ու ուժ
ունենեք ձեզ զսպել ու ցոյց հետ քաղցր
խօսելու:

Ահա ձեզ մի նոր ապացոյց այստեղի լրագրու-
թեան և ինտելիգենցիայի մէջ բոլորովին ազգա-
յին անկեղծ գզգզմունք չը լինելուն. ամբողջ
մի շաբաթ է, որ Խարբերդի վիլայէթում սոս-
կալի հեղեղներից գրեթէ հիմբից կործանվել է
Ալին հայաբնակ քաղաքը իր բազմաթիւ հայ
գլուխներով, հեղեղի մէջ անյայտացածների թիւը
հաշուում են մօտ երեք հարիւր հօգի, էլ չեն
խօսում այն միլիոնաւոր սուլի վնասի մասին,
որ հասել է խեղճ ջրատարների ունեցածներին:
Այս մասին ոչ մի հրաւէր, ոչ մի շարժում ազ-
գային ժողովի և այստեղի եթէ՛ հայ լրագիրնե-
րի կողմից. ինչպէս էք գտնում այս: Հայաստա-
նը թող հարկը անգամ կործանվի, սոցա ինչ,
սոցա համար հերք է, որ միմեանց ազգասէր
ասեն և լրագիրներին մէջ միմեանց գողեն Սօսի-
ւի նմանները:

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսից լրագիրներին հաղորդում են, որ
պետութիւնները հրամայել են Կ. Պոլսի իրանց
դեսպաններին որոշել այն հարկի գումարը, որ
Բօլքարիան պարտաւոր է վճարել Թիւրքիային:
Միայն ուսուց կառավարութիւնը, եթէ հաւա-
տանք անդլիական լրագիրներին խօսքերին, ոչ մի
հրաման չէ ուղարկել այդ բանի մասին պ. Նո-
վիկովին:

—«Polit. Corresp.» լրագիրն գրում են, որ
գլխավորմատական շրջաններում ծանր կերպով
քննվում է սպանիական զօրքերով եղիպտոսը
գրաւելու նախագիծը: Ֆրանսիական, անգլիա-
կան կամ թիւրքաց զօրքերի մասնակցութիւնը
նշանաւոր արդիւնքների կարող էր պատահել: Այն-
ինչ Սպանիան այդ դեպքում կը գործէր, որպէս
Թիւրքիայի անկեղծ դաշնակից, և միջնորդ դա-
տաւորը դերը կարող էր խաղալ Արեւելեան հար-
ցի մէջ: Այդ առիթով Լոնդոնի «Daily Teleg.»
լրագիրը նկատում է. «Այդ միտքը Մաղրիբում
չէ ծնվել: Երիտասարդ թագաւորը և նրա կարի-
նէտը, որոնք ընդհանուր յարգանք են վաշելում
իրանց զօրջ արտաքին քաղաքականութեան
պատճառով, չեն կարող չը գիտնել, որ Անգ-
լիայի կողմից լեւոնդական բոլորը կը բարձրանար
եղիպտոսը սպանիացիներով գրաւելու դէմ»:

—Փարիզից լրագիրներին հեռագրում են, սեպ-
տեմբերի 20-ից, որ յեղափոխական յանձնաժո-
ղիներ մասնաւոր ժողովը, աչքի առաջ ունե-
նալով Տոնիսի գործերի դրութիւնը, վճռեց մէկ
բազմամարդ ժողով հրաւիրել մինիստրութեանը
դատի ենթարկելու հարցը վճռելու համար: Այս-
տեղի թիւրքաց դեսպանութիւնը պաշտօնապէս
հերքում է «Gaulois» լրագրի հրատարակած լու-
րը Մեկկայում պատահած ապստամբութեան մա-
սին:

—Գերմանական լրագիրները հաղորդում են,
որ պրոֆէսոր Ազօֆ վաղէր ընտրողների բաղ-
մամբ ժողովի մէջ մէկ ճառ ասաց, և ի միջի
այլոց յիշեց, որ մանր բաների ետեւից ընկնելը
միայն կարող է դրդել մեզ ընդդիմադրել կառա-
վարութեան մեծ գաղափարներին, որի միակ նը-
պատակն է Գերմանիան, թէ դուրսը և թէ ներ-
սը զօրեղ դարձնել: Յետոյ ճառախօսը յայտնեց,
որ ինքն լաթօլիկ եկեղեցու հետ եղած կաշի
վերջացնելու կողմը կը լինի և ձայն չի տալ հը-
րէաների դէմ եղող բացառական օրէնքներին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ներքերում Պետերբուրգ հասաւ մէկ ամերիկացի
հարուստ մարդ, Մակէյ անունով, որը 600 մի-
լիոն դոլար կարողութիւն ունի, բայց չը նայե-
լով իր բոլոր հարստութեանը, ամենաթշուառ
մարդն է աշխարհում: Նրա անթիւ հարստու-
թիւնները այնպիսի բացառական դրութեան մէջ
են դնում նրան, որ միայն ծածկված և գաղտնի
կերպով կարող է ապրել: Նա ստիպված է միշտ

ծպտեալ կերպով ճանապարհորդել: Ոչ մէկ հիւ-
րանոցի տէր չը գիտէ նրա իսկական անունը.
նա երբեք չէ դիմում իր տէրութեան դեսպանու-
թեանը կամ հրապատուութեանը և նրա բանկիր-
ները պարտաւորված են պաշտի պահել նրա
ներկայութիւնը: Նա ստիպված է այդ միջոցնե-
րին դիմել, եթէ ոչ նա մի րոպէ հանգիստ չէ
կարող ունենալ. բոլոր թշուառները նրա օգնու-
թեանն են սպասում, գիւտ անողները աշխա-
տում են հետաքրքրել նրան իրանց գիւտով, բա-
րեգործական հիմնարկութիւնները ուղարկում են
նրան իրանց ստորագրութեան թերթերը զոհա-
բերութեան համար: Ոչ մի տեղ և երբեք նա
հանգիստ չունի: Ամենքը պաշարում են նրան
խնդրեցներով: Մի և նոյն ժամանակ Մակէյ
բարի մարդ է և չէ սիրում, որ իր արած բարե-
գործութիւնները հրատարակվեն: Նա այժմ
45 տարեկան է, ազգով իրանդացի է և կա-
թօլիկ կրօնին է պատկանում: Ս. Պետրոսի ժա-
պաւնը կարող է նրա առատաձեռնութեան վը-
կայ լինել: Փառն տարի առաջ նա ուղևորվեցաւ
հեռու արեւելքը բաղդ օրհնելու և միլիոնէր
դարձաւ, բայց այժմ սկսում է համոզվել, որ
կրէսոս լինելն ևս ունի իր մութ կողմերը:

*

Լոնդոնի բժշկական «Lancet» լրագիրը գը-
րում է, որ իրան յաղողից աշխարհիս ամե-
նածեր մարդու հետ ծանօթանալ. դա Միքայէլ
Սելիպ անունով մէկն է, որը Սալվատորում է
ապրում: Նա իրան 180 տարեկան է համարում,
իսկ հարևանները պնդում են, որ նա աւելի ծեր
է, որովհետեւ քաղաքի ամենածեր քնակիչները
յիշում են իրանց հայրերի և պապերի պատմա-
ներից, որ նրանց երիտասարդութեան ժամանակ
Սելիպ արդէն ծեր մարդ էր: Նրա ստորագրութիւնը
1712 թւից գտնվեցաւ ուրիշների թւում, որոնք
մէկ վանք հիմնելուն մասնակից էին եղել: Ներ-
կայ ժամանակում ծերունու դէմքը զեղնազոյն
է և նման է մազաղաթին. մազերը ձիւնի նման
սպիտակ են: Նա իր կիսերի երկարատեւութիւնը
բացատրում է իր կանոնաւոր և չափաւոր կեան-
քով: Նա օրը միայն մէկ անգամ է ուտում, իւ-
րաքանչիւր ամսուայ մէկին և տասն և հօգին
խիտ ծով է պահում. խմում է միայն սննդաբար
բաներ և երբեք տաք կերակուր չէ ընդունում:
Նրա կարծիքով, բնութիւնը միշտ սառը բան է
պահանջում:

*

Բերլինի թատրոնական կիսերում մեծ աղմուկ
բարձրացրեց նորերում «Der Berliner Courier»
լրագիրը հետ պատահած սկանդալը: Բանը նրա-
նում է, որ գերմանական թերթը զամբասեց
երիտասարդ և հասարակութեան սրկելի դերա-
տանուհուն, տիկին Վիլի Լէմանին: Վիլիստրիված
աղջիկը բաւականութեամբ գտաւ մէկ անտուր
և վճուրական միջոցով, գնալով խմբագրութիւնը,
նա, լրագրի բոլոր աշխատակիցներին ներկայու-
թեամբ, ապստիպ տուեց պ. Բօքերտ Կալիքս-
տին, վերաւորի յօդուածի հեղինակին և հրա-
տարակին: Տիկին Լէմանին ուղեկցում էր կայ-
սերական թատրոնի արտիստ Դոսիլհաուզեն: Պ.
Կալիքստն նրան մնամատի հրաւիրեց, բայց
Դոսիլհաուզեն չը համաձայնվեց մնամատիով: Նը-
րա հետ, պատճառ բերելով, որ պ. Կալիքստն
առաջին անգամ չէ, որ այդպիսի վիրաւորանք
է կրում, և հաստատեց իր խօսքերը անհերքելի
ապացոյցներով: Տեսնելով Բերլինի հասարակու-
թեան ընդհանուր գալուցիւրը, բամբասող ժուր-
նալիստը ստիպված էր փախչել քաղաքից և
դադարեցնել իր հրատարակութիւնը:

ՄԻՋԱԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 սեպտեմբերի: Դա-
բաթ օրվայ երեկոյեան նիստի ժամանակ
խմբիչների խառնութիւնի թիւը քաջանկու-
մասին խորհրդակցութիւններ չը վերջա-
ցան: Այստեղի բանկերը և բանկային անե-
րը վճռել են ներքին նոր փոխառութեանը
ստորագրվել 66 միլիոն րուբլ: Պրեզիտուս-
ցիկի վարչապա գնալու պատճառը վերա-
բերում են ցանկութեանը ծանօթանալ
նախկին ունիատների դրութեան հետ, ու-
րոնք միացել են ուղղափառ եկեղեցու հետ:
Երեկաներին հովանաւորելու ընկերութեան
նախագիծը քննվում է ներքին գործերի մի-
նիստութեան մէջ: Սեպտեմբերի 24-ին
համալսարանին կից բացված է ուսանողա-
կան ընթերցարան:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՎԱՌԵԼԱՓԱՅՑ ծախում է է-
ժան գնով: Նաբերեժնայա փողոց,
կամուրջի մոտ: Աբրամ: 4—5

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ
քան թէ ուրիշ տեղ. Թե՛, կակաո, ՇՈՎՈԼԱԻ,
բիսկիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ,
բաժաններ, բոխներ, թէյամաններ, սու-
ղոններ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուսնայու-
ամաններ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ԶԳԵՍԱԿԱՆՆԵՐ,
զղալներ, դանակներ, ԳԻՉՆԵՐ, թուղթ,
ծրարներ, տետրակներ, մատիաներ, ՀՐԱ-
ՑԱՆՆԵՐ, ԲԵՎՈԼԱԿԵՐՆԵՐ, մեջքակապներ,
կլեճակ, թԱՄԲԵՐ, օտաններ, ութներ, ՄԱՇ-
ՑԱԿԱՆՆԵՐ, երեսբրիններ, թաշկինակներ,
կանանց գուլաններ, մարդկանց գուլաններ,
տուպեաի սապոն, հոտաւէտ ջրեր, շերբետ,
ցիւրան մագնիզիա, խինայի զինի, պորո-
վէյն, խերես, կոնիակ և 1,000 այլ առար-
կաներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ
ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ վաճառականնե-
րին ՄԵԾ քանակութեամբ ծախում է
ԹԵ՛Ց. պուզերով 40, 46, 52, 58, ր.,
խակ ֆուտներով 1 ր. 1 ր. 10 ր., 1 ր. 20
ր., 1 ր. 40 ր., 1 ր. 60 ր. և 1 ր. 80
ր., խակ ամենաբարձր թէյը ֆուտը 2 ր.
բաշը ԱՌԱՆՑ ԹԻՒԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և 204-ԲՈՐ
(chokl bore) George Dau-ի գործարա-
նից 120 ր., ընկողներն 4—34 ր., ԲՈՒԼ-
ԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թաժ-
բեր 65 ր., շեֆիդի գանակներ 3 ր. 50
ր. դիւժինը, ալբոմներ կիսագնով, ֆլորա-
ներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացան-
ների և ընկողների թիֆլիսում:
21—100

ՄԻ ԿԻՆ ցանկանում է պահել ուսում-
նարանների օտարաբաղաքացի աշակերտնե-
րին ամենաձեռնառու ԳՆԵՐՈՎ: Հասցեն
Նովո-Արսենևսկայա փողոց, Գիորգի իօրդա-
նովի տանը № 28, հարցնել **ԱՆՆԱ**
ԱԲՐԱՄԵԱՆՑԻՆ: 3—4

ԿԱՊԱԼՈՎ Է տրվում ԽՕՐՈԵ-
ՎԻ ԲԱՐՎԱՆՍԱՐԱՆ, որ գտն-
վում է ՀԱԻԼԱԲԱՐԻ կամուրջի միւս
կողմը Թիֆլիս քաղաքի 3 բաժնի և պո-
լիցիական 13 մասնի մէջ: Ցանկացողները
հրաւիրվում են հօկանման 1-ից Խօսքո-
վի տունը Գանձակայա փողոցի վրա, որ-
տեղ կարելի է իմանալ կապալի պայման-
ները: 2—3

ՌՈՒՍԱՑ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
ԿՐԱԿԻ դէմ ապահովում է շինութիւններ,
ապրանքներ, պահեստներ, գործարաններ,
գիւղատնտեսական շինութիւններ և մը-
թերքներ: Կովկասի համար գործակաւար
Պ. Պ. ԲԵԺԱՆԲԵԿ: Գրասենեակը գտնվում է
երկանակայա հրապարակի վրա քաղաքային
տան մէջ առաւօտեան 10—2 ժամը և երե-
կոյեան 6—8 ամեն օր ֆոն-ԳՈՐԾԱԿԱՑԱՐ-
ՆԵՐ. Բուխարսկում Հ. Պ. ԲԵՇԱՆԲԵԿ, ֆո-
թի. Գ. ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆ, Ախալցխա
Պ. ՋԱԼԱԼԲԵԿ: Նոյն տեղը ապահովու-
ւն ներքին 5% առաջին և երկրորդ փոխա-
ռութեան ՏՈՄՍԱԿԱՆԵՐ 55 ր. Ս. Պետեր-
բուրգի Ի. Վ. ԻՆԿԵՐ բանկային տան յան-
ձնարարութեամբ: (Հ. Շ.)

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԽԱՆՈՒԹ
Արժուճու գալէթիւմ № 194, 195
և 196: ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԵՆ մեծ
քանակութեամբ ԿԱՆԱՆՑ ՀԱԳՈՒՍ-
ՏՆԵՐ և զարդարանքներ: Աշխատյին
ՊԱԼՏՈՆԵՐ, ԿՕՑՏԱՆԵՐ, տալմա-
ներ, Դօլոմաններ, ԴԻՊԼՕՄԱՏՆԵՐ,
փառապրոֆներ և թաւշայ շուքաներ:
Ծախվում են շատ **ԶԱՓԱԻՐ ԳՆԵ-**
ՐՈՎ: Գրասենեակը գտնվում է Կոմիտասի
մասնաճիւղի վրա Կոմիտասի տան մէջ:
3—4

ԹԵ՛Ց ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱ-
ՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆ-
ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ թէյ
լաւ տեսակի ֆուտը 1 ր. 20 ր. և 2 ր.
և համեմատեան առաջինը 1 ր. 60 ր. հետ
և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՒ-**
ԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիա-
կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ
թէյի համեմատական **ԳԵՐԱՉԱՆ-**
ՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական
խանութը կը ունէր **ՄԱԲՈՒՐ** թէյ
առանց **ԹԻՒԹԻ** և **ԱՐՃՃԻ:**
56—100

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ
ԲԱՆ ԹԵ ՈՒԻՇԵ ՏԵՂ: մուրաբա-
ներ, կոնֆետներ, ԿԱԿԱՍ, բրինձ, Ա-
ՄԱՆԵԼԵՆ, բոկալներ, թասեր, երես լուս-
նայու ամաններ, չալիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ,
կերակրի ամաններ (սյաքս), մատուցարան-
ներ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գալաններ,
ԳԻՉՆԵՐ, թուղթ, մատիաներ, տետրակ-
ներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԵՎՈԼԱԿԵՐՆԵՐ, ալբոմ-
ներ, ՄԱՇՑԱԿԱՆՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիֆո, պա-
րուսին, թաշկինակներ, երեսբրիններ, կլեճ-
կա, գուլաններ, թԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԵՇՆ, խե-
րես, կոնիակ և այլն: Թե՛Ց մեծ քանակու-
թեամբ **ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ** համար ՊՈՒԴԻ
44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54
ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:
Մի և նոյն տեղը էժան գնով: ԾԵՐԲԵՏ մա-
գնեցիկա, խմոր ԾԱՐԱԽԻ դէմ, ԽԻՆԱՑԻ գի-
նի ջերմի դէմ, կարթոյան ֆՕՇԻ, հեղուկ
և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ վատերկրոյե-
տի համար, պարսկական փօշի: 75—100

144 Արժուճու գալէթ 144
ամենաէժան պահեստ
մեքէլի և հայեկների:

ՆՈՐԵՐՈՒՄ լոյս տեսաւ և վաճառվում է
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
Պ. Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ
յօրինած գրքովը
ԳՐԱԲԱՌԻ ՀՈՒՆՎՈՒՄԸ
Քիւրազիւսի մէջ

Գործնական և գիտական ուսումնա-
սիրութեան համար, գինն է 15 կոպ.
4—5

Պատու ունիւմ խնարհաբար խնդրել ա-
պագայ **ՀԱՅՈՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԻ-**
ՍՈՒՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ համար
կազմած ուսումնական յանձնաժողովի մե-
ծապատու անդամներին առաջիկայ **ՉՈ-**
ՐԵՔՇԱԲԹԻ, ամսոյս 30-ին, երեկոյեա-
6 ժամին շնորհ բերել **Ս. ԳԱՅԻԱ-**
ՆԵԱՆ օրիորդական դպրոցը ապագայ
ընդհանուր ուսուցչական ժողովի համար
մի կարգադրիչ մասնաժողով ընտրելու հան-
մար: Թեմական վերատեսուչ
Գ. Բարխուդարեանց:
2—2

Մեր ընկերութեան **ԹԵ՛Ց ԳՈՐԾԱ-**
ԾՈՂՆԵՐԻՑ ԽՆԴՐՈՒՄ **ԵՆՔ**
ուշադրութիւն դարձնել, որ բանդերօրնե-
րի վրա անպատճառ **ԼԻՆԵՆ Կ. ԵՍ-**
ՏԱՌԵՐԸ:
Կ. ԵՍ. ՊՈՊՈՎ ԵՂԱՑՐԵՆԵՐ
Առեւտրական տուն **ՄՕՍԿՎ ԱՅՈՒՄ:**
2—14

ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԱՆ
դասեր ընտանիքներում: ՀԱՐՑՆԵԼ, **ՄԸ-**
ՇԱԿԻ Խմորաբլիթեան մէջ:
ՖԲԱՆՍԵՐԵՆԻ և ԻՏԱԼԵՐԵՆԻ դասեր:
ՀԱՐՑՆԵԼ, **ՄՇԱԿԻ** Խմորաբլիթեան
մէջ:

ՎԻԵՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բաղկաթոռներ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջին փողոցում կատարվող փողոցի անկիւնում ՄԻ-
ԲԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵՆԻ պահեստում:
Օտարաբաղաքացիք կարող են դիմել այս հասցեով: Тифлисъ, Михайлу
Н. Теръ-Никогосову.
79—150

Վերականգնող **ՄԱԿ-ՄԱՍ-**
ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց
ԲՆԱԿԱՆ ԳՈՑՆԵՐ վերադար-
ձնող: Վրին 2 ր. շերտ, **ՓՈՍՍՍ-**
ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ.
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՑԻ**
ԽԻՂ, մազերը ամրացնող հա-
մար, 1 ր. ամանը վրին պիտա-
ցաւի դէմ, **ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱ-**
ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն:
29—100

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.
ՆՈՐ ՏՊԱՐԱՆԸ
Ընդունում է ամենայն տեսակ և ամեն
ծախվում է կենտրոնական և կովկասեան լեզուի տպագրութիւններ: ՀԱՏ ԶԱՓԱԻՐ
դրամաճառանոցներում: Վրին է 50 կոպէկ:
Գինով:
4—10 5—6

Մամուլի տախ է, և շուտով լոյս կը տեսնի **Ս. Մանդրինեանի հեռեւայ**
աշխատութիւնը՝ «ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՑ
ԹՈՒՐԱՐԱՆՈՒԹԻՒՆ» ծխական դպրոցների 4-դ տարվայ դասընթացը,
և միանգամայն 1-ին, 2-դ և 3 տարիների համար հրահանգ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ			
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՐԵԱԼ ՀԱՅԵՐԵՆ ԴԱՍԱԳՐԵՐԸ			
1	ՏԵՐ-ՂԵՆԴԵԱՆ՝ Մայր. լեզուի մ. ա.	35	ր.
2	— — — — — մ. բ.	40	ր.
3	— — — — — մ. գ.	70	ր.
4	Ս. Մանդրինեանց՝ Նահապետական և հայր. աշխարհ.	65	ր.
5	— — — — — Գիւցնազական աշխարհ.	30	ր.
6	— — — — — Ընտանեկան աշխարհ.	25	ր.
7	Կոստանեանց՝ Ծաղկաբաղ առձակ և չափածոյ բանից.	25	ր.
8	— — — — — երկրորդ շրջան.	60	ր.
9	— — — — — երրորդ շրջան.	40	ր.
10	Աղայեանց՝ Ուսումնի մայր. լեզուի մ. ա.	15	ր.
11	Նազարեանց՝ Ուսուցիչ՝ Հայոց լեզուի գ. տարի.	40	ր.
12	— — — — — չորր. տարի.	60	ր.
13	Ա. Վաղեանց՝ Նախակրթանք գրաբ. լեզուի մ. ա.	40	ր.
14	— — — — — մասն երկր.	45	ր.
15	— — — — — մասն երր.	50	ր.
16	Եղիշէ՝ պատմութեան վարդանանց.	80	ր. և 1
17	Եղիշէ՝ եղծ աղանդոց.	1	ր.
18	Բազրատունի՝ Տարերք քերականութեան.	1	ր. 25
19	Պալասան՝ Քերականութիւն աշխ. լեզուի.	50	ր.
20	Բահաթրեանց՝ Քերական աշխ. լեզուի.	25	ր.
21	ՏԵՐ-ՍՈՒՓԱՆՈՒՆԵԱՆՑ՝ Սկզբունք քրիս. հաւատ.	50	ր.
22	Պապովեան՝ Սրբազան պատ. հին կտակարանի.	60	ր.
23	— — — — — նոր կտակարանի.	40	ր.
24	Հէնշէ՝ Թուրքական խնդ. ժողովածու (Ս. Մանդր.).	40	ր.
25	Վարձկեան՝ Գաղաղիքը թուրքականութեան.	70	ր.
26	РУССКОЕ СЛОВО ԵՐ-ԳԱՌԵԲԱՆԻ.	45	ր.
Ամենատեսակ ուսուցիչի լեզուի ձեռնարկներ			
27	Սիմոնեանց Ն. Ընդհ. աշխարհագրութեան նախագիտ.	35	ր.
28	— — — — — նոյն մասն ուսումնական.	60	ր.
29	— — — — — նոյն մասն քաղաքական.	60	ր.
Նոյն տեղը վաճառվում են նաև այն գործածական դասագրքերը, որոնք այս յայ- տարարութեան մէջ չեն յիշատակված: Բացի սորանից՝ կենտրոնական գրավաճառանո- ցին կից բացուած է նաև ուսումնարանապատկան և կանցելարիական ամենատեսակ իրե- ղէնների առանձին բաժանմունք: Գաւառական ուսումնարանների պահանջները կատար- վում են առանց յետաձգութեան: Գումարով գնողներին նշանաւոր գիշումն է լինու- ման փող պատուէրն անկատար եւն մեռւմ:			